



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland
His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish

Սր Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

t. +44 (0)20 7373 8133 Pastoral office e.info@styeghiche.org.uk

www.styeghiche.org.uk <https://www.facebook.com/StYeghiche>

Visiting Priest Rev Fr Movses Sargsyan

1: List of the Sunday Reading,

17th January 2016

Bulletin No 3/16

Սուրբ Ծննդեան առաջին կիրակի (հունվարի 17, 2016թ.)

First Sunday of Christmas

Հովհաննէս 6.15-21

Հիսուսը քայլում է ջրերի վրա

Երբ Հիսուսն իմացավ, որ գալու են բռնությամբ իրեն թագավոր դարձնելու, առանձին դարձյալ լեռը բարձրացավ: Երեկոյան Հիսուսի աշակերտները իջան լճի եզերքը և նավակ մտնելով՝ սկսեցին գնալ լճի մյուս կողմը, դեպի Կափառնայում: Երբ մութն ընկավ, Հիսուսը տակավին իրենց մոտ չէր եկել: Լիճն ալեկոծվում էր ուժեղ քամուց: Աշակերտները հազիվ հինգ կամ վեց կիլոմետր էին նավարկել, երբ տեսան Հիսուսին, որը, լճի վրա քայլելով, մոտենում էր նավակին: Բոլորն էլ սարսափեցին: Հիսուսն ասաց նրանց.

-Ես եմ, մի՛ վախեցեք:

Նրանք ուզում էին նավի մեջ առնել նրան, բայց շուտով նավակը հասավ այն տեղը, ուր գնում էին:

John 6:15-21

Jesus Walks on the Water

Jesus, knowing that they intended to come and make him king by force, withdrew again to a mountain by himself. When evening came, his disciples went down to the lake, where they got into a boat and set off across the lake for Capernaum. By now it was dark, and Jesus had not yet joined them. A strong wind was blowing and the waters grew rough. When they had rowed about three or four miles,[a] they saw Jesus approaching the boat, walking on the water; and they were frightened. But he said to them, "It is I; don't be afraid." Then they were willing to take him into the boat, and immediately the boat reached the shore where they were heading.

2: A short interpretation of the Gospel reading under the title 'The hard sayings'

Հովհաննես 6.15-21 համարների համառոտ բացատրությունը

Աստծո Որդին կանգնած էր լեռան բարձունքին ու աղոթում էր: Իսկ հսկայական ալիքները սարսափազդու կերպով տարուբերում են նավակը, որի մեջ առաքյալներն են, և թվում է, թե վախճանն անխուսափելի է: Առաքյալները սարսափի մեջ են, նրանք իրենց լքված են զգում Տիրոջ կողմից:

Այդպես էլ այժմ, երբ մենք որևէ դժվարության ենք հանդիպում՝ պիտի հիշենք, որ Փրկիչ ունենք՝ մեր Տեր Հիսուս Քրիստոս, որ միշտ շատ մոտ է մեզ՝ բարձունքում կանգնած է ու տեսնում է ամեն ինչ: Իսկ Նրա աշակերտները մոռացել էին այդ մասին և այդ պատճառով էլ սարսափի մեջ էին: Իսկ Տերը ոչ միայն բարձունքում կանգնած աղոթում էր նրանց համար, այլև փութաց ներքև իջնելու ու բռնակ առաջ օգնության հասնելու Իր սիրելի աշակերտներին: Կարծում եմ ամենարագ ճանապարհը նրանց հասնելու և օգնելու՝ ջրերի վրայով գնալն էր, քանի որ քամին հանդիպակաց կողմից էր փչում և հավանական է, որ այն ափին, որտեղ Հիսուսն էր, նավակ էլ չկար, որ դրանով հասներ նրանց: Իսկ Նա շատ էր սիրում Իր աշակերտներին և ուզում էր օգնել նրանց, նրանց կողքին լինել: Իսկ աշակերտները խավարի մեջ հազիվ նշմարելով դեպի իրենց եկող ինչ-որ մեկին, սարսափից սկսեցին բղավել, քանի որ կարծեցին, թե մահվան ուրվականն է իրենց այցելել: Եվ այնժամ լսեցին Նրա ձայնը, որ ասում էր. «Սրտապնդվեցե՛ք, ես եմ, մի՛ վախեցեք»:

Հենց այսպես էլ մեզ հետ է պատահում, երբ կյանքը բոլորովին անտանելի է դառնում: Այդ ժամանակ մեր Փրկչի ձայնն ասում է մեզ. «Ես այստեղ եմ, մի՛ վախեցեք: Կյանքը, ծովը և ամեն ինչ ինձ է ենթարկվում, միայն թե հավատացեք և Ինձ հուսացեք»:

Thank you Ladies

St Yeghiche Parish Council would like to thank ACC's Ladies Committee and St Yeghiche's Ladies Guild for their joint effort in organizing a very successful and enjoyable Armenian Christmas Lunch on 6th January at Massis restaurant.

3: Feasts celebrated in the Armenian church

Մբ. Հովհաննես Կարապետի ծննդյան տոն

Հունվարի 14-ին Հայ Առաքելական Եկեղեցին նշում է Հովհաննես Մկրտչի՝ Կարապետի (որն ավետեց Հիսուս Քրիստոսի գալուստը) ծննդյան տոնը: Հովհաննես Մկրտչի ծնունդը մանրամասն նկարագրել է Ղուկաս Ավետարանիչը (Ղուկ. 1:5-25): Հովհաննեսի հորը՝ Ջաքարիա քահանային Տիրոջ տաճարում խնկարկության ժամանակ հայտնվում է Տիրոջ հրեշտակը և ավետում նրա որդու ծննդյան մասին: Սակայն ծեր Ջաքարիան թերահավատությամբ է ընդունում բարի լուրը և կասկածամտության համար, որպես պատիժ, մինչև իր որդու ծնունդը դառնում է համր:

Հովհաննես Մկրտիչը, որը պիտի մկրտեր համայն մարդկության Փրկչին, ճանաչել և Հիսուսի աշխարհ գալստյան համար ցնծացել է դեռևս Նրա ծննդից առաջ: Ավետարանիչը վկայում է, որ երբ Աստվածամայր Մարիամն այցելում է Եղիսաբեթին՝ Մբ. Մկրտչի մորն, վերջինս, լցվելով Սուրբ Հոգով, բացականչում է. «Որտեղի՞ց ինձ այս ուրախությունը, որ իմ Տիրոջ մայրը ինձ մոտ գա, որովհետև ահավասիկ, երբ քո ողջույնի ձայնը հասավ իմ ականջին, մանուկը ցնծալով խաղաց իմ որովայնում» (Ղուկ. 1:43-44): Եղիսաբեթի խոսքի շարունակությունն այս տոնի պատգամն է համայն քրիստոնյաներին. «Եվ երանի՜ նրան, որ կհավատա, թե Տիրոջ կողմից իրեն ասվածները կկատարվեն»:

Feast of the Birth of St. John the Forerunner (Baptist)

The birth of St. John the Baptist is described in details in the Gospel according to Luke (Lk 1:5-25). One day Zechariah, father of St John the Baptist, was doing his work as a priest in the Temple and was burning incense on the altar. An angel of the Lord appeared to him and said that God had heard his prayer and his wife would bear him a son. Zechariah had to name him John. Zechariah didn't believe the angel as he was an old man, and his wife was old, too. And because he hadn't believed the angel he became unable to speak and remained silent until the birth of John.

St. John the Baptist, who should baptize the Savior, had been aware and rejoiced for the birth of Jesus even before his birth. According to the Evangelist, when St. Mary, Holy Mother of God, visited Elizabeth, mother of St John the Baptist, the latter, being filled with the Holy Spirit cried out, "Why should this great thing happen to me, that my Lord's mother comes to visit me? For as soon as I heard your greeting, the baby within me jumped with gladness" (Lk 1:43-44).

Continuation of the words of Elizabeth are the message of this feast addressed to all Christians throughout the world, "How happy you are to believe that the Lord's message to you will come true!" (Lk 1:45).

4: Հոգեհանգիստք - Memorial Service

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

ENQUIRIES:

For ecclesiastical matters including requests for Home Blessing (Dnorhnek) please contact the Church Parish Council or Priest on telephone 020 7373 8133 or email info@styeghiche.org.uk

For Hokehankist requests, Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages, Christenings, and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, telephone: 07970 146 280 or email VHaladjian@styeghiche.org.uk

Both the above will be pleased to deal with personal enquiries every Sunday after Devine Liturgy.

Please remember our Church in your prayers.

ANNOUNCEMENT:

Your kind donations are gratefully accepted:

In order to meet the ever increasing church functioning expenses, The St Yeghiche Parish Council would like to appeal to all members of the community for their annual membership dues and generous donations.

Please complete this form and hand your donation to the members of the Parish Council at the side entrance of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish c/o Dr. Setrag Karanfilian, Cranley Gardens, and Kensington London, SW7 3BB. Please make your cheques payable to: "St Yeghiche Armenian Church".

Alternatively you can arrange your donation by bank transfer to our St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at:

HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB73MIL40022642674432, BIC: MIDLGB2106F

I wish to donate £to the St Yeghiche Armenian Church Parish.

Name:

Address:

Tel:.....Email:.....